

ները մէջը ձգելով, մի քանի բողէ պահելով հանում եւ կախելով վայսերի կամ պարանի վրայ չորացնում:

Չորանալուց յետոյ վեղիրների թելի մի ծայրը բանալով սկսում են կծկել, գընդակներ շինել: Այդ կծիկները գործադրելուց առաջ, եթէ ուզում են միահաւասար հաստութեամբ թել ունենալ, աւելորդ մաղեր չմնան կպած, քրիչով (քերթիչ) քըրթում են, այն է թելը ձախ ոտի երկու մատների միջից անցնելով եւ ձախ ձեռքի երկու մատներով թոնելով, իսկ այլ հներքում բոնածած պարագած ճաղը այդ թելի կուրոր միանցքից տանել-բերելով, մաքրում են: Դեսնի վրայ թափաւած մազերը ասուում են քրիպանի, իսկ ձախ ձեռի երկու մատներին փաթաթած թելը՝ քարուկ:

Գորդեր եւ կապերտներ գործելու համար հետեւեալ գործիքները կան. ա) վեստար հետեւեալ գործիքները կան. ա) վեստար (սստայնը), որը երկու դիք դրած եւ տանը (սստայնը), որը երկու դիք դրած եւ ներքեւից ու վերեւից նրանց ծայրերին անցրած շարժական կուրոր փայտերն են, ոստայնը կանգնեցելուց յետոյ իլինում են, տայնը կանգնեցելուց յետոյ կուրում են, այն է գորդի կամ կապերտի աստառի թերն են անցկացնում, որը սստայնի բարձր ասպն են անցկացնում, որը սստայնի վրայ անցրած առաջի կողմի թելերը յիտ ու առաջ է տանում եւ այդ թելերի վրայ հորիզոնական կերպով սկսում են գորդի գործոցն թելերը ացնել եւ կոփիչ, քելակու ասուած գործիքներով պնդացնել:

Երբ գորդի կամ կարպետի գործուածքը 1/4 կամ աւելի արշին բարձրանում է, թուացնում են կուրոր փայտին խփած սկսերը եւ կարպետը ներքեւի կողմով բարձրացնում, սար հանում:

Նայած գորդի կամ կապերտի երկայնութեան եւ լայնութեան. սստայնի տակ նստում են 2—4 հոգի եւ իրենց առջեւը կրած գորդի օրինակին նայելով ճշպութեամբ թելերը անցնում:

Երբ վերջացնում են գործուածքը եւ ֆնում է մօտ մի արշին չործած աւելի տեղ, հանձոյք են կազմում, չարեւաներին ու բառեկամներին կանչում գորդը կտրելու օրը:

Զբերք, ամուլի կամ յղի կանայք այդ գորդին գալիս են իրենց բախտը փորձելու, որը զալիս են իրենց բախտը գործած աւելի դիք աղջիկ կ'ունենան թէ ոչ, զիտ աղայ կամ աղջիկ վրայ չղործուած թելերի համար սստայնի վրայ չղործուած, ծակ են բաց անում, քէջ տեղից կտրում:

ամուլի կինը անց է կենում երեք անգամ այդ ծակով եւ սստայնի տակ ուսները մէկնում: Գորդը կտրելուց ընկնում է նրա վրայ: Հանում են ասպը տալիս մի տղայի, որը ձի շինած դուրս է վագում, եթէ փողոցում առաջին անգամը տղայի է պատահում, ասել է այդ կինը աղայ կը ծնի, եթէ աղջկայ է պատահում աղջիկ:

Գորդը կտրող կինը, եթէ անեցի չէ, կտրելուց առաջ մկրատը քաքսում է թելերին ու կանչում: «Կտրը չի խալաթ բերէք, վեր կտրի, ընձայ բերէք»: Բնձան ստահալուց յետոյ կտրում է:

Միջի հրաւերուած անձանց լաւ ճաշ են տալիս եւ երեկոյեան պտուղ բաժանելով, տան մէծը նրանց օրհնելով, ճանապարհ է դնում:

Կ. Կ. ՄԵԼԻՔ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ



ՄԻՀՐԱՄ ԹԻՐԵԱՓԵԱՆ

ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

WEBER, Dr. Simon. — Ausgewählte Schriften der Armenischen Kirchenväter. I. und II. Bd. 1927. Verlag Kösel u. Friedr. Pustet, München.

Սիմոն Վէրէր երկու հատորներու մէջ կու տայ թարդմանաբար քաղուածոյք մը մէր ստացին դարերու հարց գործերէն, որոնք մինչեւ այսօր չեն կրցած — չենք գիտեր ինչո՞ւ — իրենց արժանավայիւ դիրքը գրաւել չայրախոսական մատնաշարժերուն մէջ:

Առաջին հատորը կը պարունակէ ամբողջական թարդմանութիւնը եղնկայ «Բնդէմ աղանդոց»ին, Կորհան՝ «Վարք Մաշտոց»ին եւ «Յաճախապատումին» զոր թարդմանիչը հայ գրերու հեղինակին կը վերագրէ. Ժամանակավրէպ: Երկրորդ հավերգութիւնը աւելի ճառական բովանդակութիւնը աւելի ճառական է. այսպէս թարդմանուած են ընտրանօք՝ Մամբրէի վերծանողի, Յովհ. Մանղակունւոյ եւ եղիշէի ճառերէն լաւագոյները:

Գործին ծրագիրն է, ինչպէս կը տեսնուի, թարդմանել եւ ծանօթացնել գիտական աշխարհին Հայ եկեղեցապատմական

գրութիւնները, տալ անոնց հեղինակներուն համառօտ՝ բայց քննադատական կենսադրականը եւ լուսաբանել բնագիրները եւ այլն եւայլն։ Առ այս Ս. Վէրէրի օժանդակած են մեզի ցայժմ անձանօթ ուրիշ երկու հայագէտներ՝ եւգեն Սոմմէր եւ Յովա. Բլաց. առաջնոյն կը պարտինք «Յաճախապատում»ին այս նոր թարգմանութիւնը. իսկ Յովսէփի Բլացին կը պարտինք Յովհ. Մանդակունոյ ճառերուն գերմաներէն երկրորդ թարգմանութիւնը։

Եղնիկ, Յաճախապատումը եւ Յովհ. Մանդակունոյ ճառերը արդէն թարգմանութեամբ լոյս տեսած են Շմիդի աշխատութեամբ — Schmid Joh. Michael, Des Ward. Eznik v. Kolb Wider die Sekten, Druck und Verlag der Mechitharisten-Kongregation, Wien 1900. Reden und Lehren des heil. Gregorius des Erl. Patriarch. v. Armenien, Regensburg 1872. — Heilige Reden des Joh. Mandakuni, Regensburg 1871, — Թէ Ե'նչ բանէ դրդուած Սիմ. Վէրէր այս երկրորդ թարգմանութիւններուն ձեռնարկած է որու չենք գիտեր. սաշափը կրնանք անկեղծօրէն չեշտել, որ այս կրկին թարգմանութիւնները իրենց պայծառութեամբ բնթերցանութեան ընտիր նիւթեր կրնան ըլլալ, բնականարար ժողովրդական իսաւերու մէջ։

Կորիւն, որուն իմաստն ու լեզուն նոյն իսկ հայու մը համար դժուարը մրոնելի է, յաջող թարգմանութիւն է եւ կրնանք ըսել որ մեծապէս կը գերազանցէ թէ՛ Ռ. Իմինի Փրանսէրէն թարգմանութիւնը եւ թէ՛ Վէլտէի գերմաներէն թարգմանութիւնը։ Gorioun Biographie du bienheureux et S. docteur Mesrob, trad. pour la première fois en français, Par J. Raph. Emine, Paris 1869. — Goriuns Lebensbeschreibung des heiligen Mesrop, B. Welte-Tübingen 1841.

Ինչպէս Եղնկայ թարգմանութեան մէջ անտեսուած կը գտնենք Մարիէսի քննադատական ուսումնասիրութիւնը՝ Le Deo d'Eznik de Kolb, connu sous le nom de „Contre les sectes“ études de critique littéraire et textuelle par Louis Mariés, Paris 1924. Առյուղէս անյիշատակ կը գտնենք Դկտ. Մարկուարտի հատակոտոր թարգմանութիւնները Կորիւնէն — հատակոտորներ,

որոնք սարկայն բանասիրութեան առջեւ ունին թանկագին արժէք, քան ինչ որ ունին երկու տաղուած խմբագրութիւնները. Markwart Dr. Jos., Über den Ursprung des armenischen Alphabets in Verbindung mit der Biogr. des heil. Maštoc, 1917. Ապահով Ենք որ Կորեան այս նոր թարգմանութիւնը աւելի կատարեալ կ'ըլլար եթէ Սիմոն Վէրէր նկատի առած ըլլար նաև Նորայր Բիւզանդանդացւոյ շատ ընտիր գործը՝ — «Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք», Տփղիս 1900, ուր Ն. Բիւզանդացի հմտօրէն քննած եւ ուսումնասիրած է Կորեան կենսագրականը ու լեզուն, մեկնած է Մաշֆոցի վարուց մթին տեղիքները, սրբագրած է անստորդ բառերը եւայլն։

Զենք ուղեր անյիշատակ ձգել նաեւ առաջին հատորին սկիզբը զրուած բաւական ընդարձակ ներածութիւնը, որուն մէջ Ս. Վէրէր կու տայ պատմութիւնը հայ մատենադրութեան Ե. Ռու գարեն մինչեւ Բ. գար։ Առ հասարակ լաւ է իր համառօտութեան մէջ եւ լաւագոյն կ'ըլլար ի հարկէ, եթէ Ս. Վէրէր նկատի առած ըլլար նաև վերջին 30 տարուան հայ բանասիրական տուեալները, ինչ որ գժբախտաբար անտեսուած է։ Օրինակ Մովսէս Խորենացւոյ վրայ գտանք շատ տարտամ խօսքեր . . . մինչ հայ բանասիրութիւնը այլեւս վերջացած կը նկատէ մեր պատմագրին ինդիբը։

Կը չնորհաւորենք բաղմաշխատ թարգմանիչը եւ կը մաղթենք որ մօտ ապագային նորագոյն հատորներով գայ ձոխացնելու այս միեւնոյն Բարգենհեւերեան հայրախօսական մատենաշարքը, որուն աշխատակիցներէն է ինքն Սիմոն Վէրէր։

Հ. Կ. ՏԷՐՄՈՅԵԱՆ

